ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ազգային Ժողովի ընտրություններ 2017թ.

# Քվեարկության 5 քայլ

## 1 Նույնականացում



## 2 Գրանցում



## 3 Քվեաթերթիկներ



## 4 Քվեարկություն



## 5 Քվեատուփ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# 1

# Նույնականացում




**1.** Քվեարկել կարող ես պատկերված փաստաթղթերից որևէ մեկով



**2.** Ներկայացրու անձը հաստատող փաստաթուղթը մասնագետին



**3.** Մասնագետը ստուգում է քո ինքնությունը



**4.** Անձը հաստատող փաստաթուղթը ներմուծվում է սարքավորման մեջ



**5.** Սարքավորման էկրանին կպատկերվի տվյալներդ



**6.** Մասնագետի հրահանգով ներմուծիր աջ ձեռքիդ ցուցամատի մատնահետքը



**7.** Սարքավորումը տպում է կտրոնը



**8.** Մասնագետը կտրոնը և անձը հաստատող փաստաթուղթը վերադարձնում է ընտրողին

**Ուշադրություն՝ կտրոնը չկորցնել, քվեարկության ծրարի մեջ չդնել, տեղամասից չհանել**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# 2

# Գրանցում



**1.** Մոտեցի՛ր գրանցում իրականացնող հանձնաժողովի անդամին և ներկայացրու կտրոնը



**2.** Հանձնաժողովի անդամը կտրոնից վրա պատկերված համարով գտնում է քո անունը ընտրողների ցուցակում



**3.** Ստորագրի՛ր ընտրողների ցուցակում քո տվյալների դիմաց



**4.** Հանձնաժողովի անդամը դնում է իր անհատական կնիքը քո ստորագրության դիմաց



**5.** Այնուհետև նույն կնիքով կնքում է կտրոնը



**6.** Հանձնաժողովի անդամը քեզ է վերադարձնում կտրոնը

**Ուշադրություն՝ կտրոնը չկորցնել, քվեարկության ծրարի մեջ չդնել, տեղամասից չհանել**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

3

# Քվեաթերթիկներ



1. Քվեաթերթիկ և քվեարկության ծրար տրամադրող հանձնաժողովի անդամին ներկայացրու՛ կտրոնդ

▼



2. Ստացի՛ր ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցության, կուսակցությունների դաշինքի մեկական քվեաթերթիկ և քվեարկության մեկ ծրար

**Ուշադրություն՝ ընտրողը չի կարող հրաժարվել բոլոր քվեաթերթիկները ստանալուց**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# 4

# Քվեարկություն



**1.** Քվեարկում ես անձամբ՝ առանց այլ անձի ներկայության քվեարկության խցիկում



**2.** Քվեարկության խցիկում ընտրի՛ր քո նախընտրած կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի քվեաթերթիկը: Այս էջում նշում չի կատարվում:



**3.** Եթե կուսակցությունից կամ կուսակցությունների դաշինքից բացի ցանկանում ես նաեւ տարածքային ցուցակից թեկնածու ընտրել, ապա նույն քվեաթերթիկի երկրորդ էջում՝ թեկնածուի անվան դիմացի քառանկյունում դի՛ր այս V նշանը:



**4.** Տեղադրի՛ր քվեաթերթիկը ծրարի մեջ՝ առանց ծալելու



**5.** Չօգտագործված քվեաթերթիկները գցի՛ր քվեարկության խցիկում տեղադրված տուփի մեջ



**6.** Կտրոնդ չմոռանաս քվեարկության խցիկում

**Ուշադրություն՝ կտրոնը չկորցնել, քվեարկության ծրարի մեջ չդնել, տեղամասից չհանել**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## 5

## Քվեատուփ




**1.** Մոտեցի՛ր քվեատուփին և հանձնաժողովի անդամին հանձնիր կտրոնդ



**2.** Հանձնաժողովի անդամը քվեարկության ծրարի կտրվածքի միջով ինքնասոսնձվող դրոշմանիշ է փակցնում ծրարում գտնվող քվեաթերթիկին




**3.** Հետևի՛ր, որ ինքնասոսնձվող դրոշմանիշը փակցվի ծրարում գտնվող քվեաթերթիկին




**4.** Գցի՛ր ծրարը քվեատուփի մեջ, երբ հանձնաժողովի անդամը կբացի քվեատուփի ճեղքը

## Շնորհակալություն քվեարկությանը մասնակցելու համար